

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N 1640-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՀՐԱՄԱՆ**

Նախագիծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N 1640-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1.1. մասը
և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ
հոդվածները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի
24-ի՝ «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ
ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ
ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և
հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ
ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգը
հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և
գիտության նախարարի 2003 թվականի օգոստոսի 25-ի N 619-Ն,
2010 թվականի օգոստոսի 30-ի N 1350-Ն հրամանները ուժը կորցրած
ճանաչելու մասին» N 1640-Ն հրամանի հավելվածի՝ 12-րդ կետը
շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1) «12. Սովորողների ընդունելությունը կազմակերպելիս
առաջնահերթություն տրվում է՝

1) տվյալ դպրոցում սովորող քույր, եղբայր ունեցող երեխաներին.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ տվյալ
դպրոցից մինչև տուն սպասարկման հետիոտնային հասանելիության

շառավղով բնակվող՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված ընտանիքների, խնամակալության տակ գտնվող, հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող ծնողների երեխաներին.

3) տվյալ ոլորտային օրենսդրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ներքին գործուղման հետևանքով առնվազն 6 ամիս ժամկետով այլ բնակավայր տեղափոխված պետական համակարգի աշխատողների երեխաներին.

4) տվյալ դպրոցի աշխատակիցների երեխաներին:»,

2) 16-րդ կետում «6-րդ» թիվը փոխարինել «7-րդ» թվով,

3) 17-րդ կետում «12-րդ կետում նշված ժամանակահատվածում» բառերը փոխարինել «13-րդ կետում նշված ժամանակահատվածում» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ